Արձանագրություն N 4
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 նոյեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Է. Մխիթարյանը և Գ. Մելիքսեթյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Բանակցությունների և մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով ընթացակարգի մասնակից «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ն 04.11.2022 թվականին ժամը 11:30-ին հրավիրվել է գնի նվազեցման շուրջ բանակցությունների:

«Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով ընթացակարգի բանակցություններին չեն ներկայանալու և հայտով ներկայացված գնային առաջարկը մնում է անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովի կողմից ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով հրավերի 8.22 կետի համաձայն հրավիրված արտահերթ նիստում քննարկվեց «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի տեղեկությունները:

Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական տեղեկատվությունը և «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված սույն Հրավերով սահմանված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) արձանագրեց՝ որ հայտարարագրի 4.5.1 և 4.7.1 ենթակետերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում առկա տեղեկատվությանը:

Ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող, «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժել:

Հանձնաժողովի որոշումը

Ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող:

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ

կետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.21 կետերը՝ ընթացակարգի մասնակից «Սմարտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը մերժել:

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/1-ՆԱ ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) և հրապարակել հայտարարություն, ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Վ. Օհանջանյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Է. Մխիթարյան
	_____	Գ. Մելիքսեթյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան